Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2844

616.9
U-30

2010

Printed in Turkey

ՀԱՄԱՌՕՏ
ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

ԳՕԼԵՐԱՑ ԱԽՏԻ

ՅՕՐԻՆԵԱԼ
Ի ԿԱՐԱՊԵՏ ԷՖԷՆԴԻ ԱԼԹՈՒՆԵԱՆ
ԱԿՆԵՑԻ

2002

Կ.-ՊՕԼԻՍ
Ի ԴՈՐԹԱՐԱՆԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ
)(1870)(

616.9
Ա-30

16488

515
39

Printed in Turkey

616.9
Ս-30

5

Ս

ՀԱՄԱՌՕՏ
ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ

ԳՕԼԵՐԱՑ ԱԽՏԻ

ՑՕՐԻՆԵԱՆ
Ի ԿԱՐԱՊԵՏ ԷՖԷՆԴԻ ԱԼԹՈՒՆԵԱՆ
ԱԿՆԵՑԻ

Հոլովումն ժամանակաց ազդէ 'ի մարդիկ ըստ
երից դէմոց, 'ի տնական որպիսութիւն նո-
ցա, 'ի զգայականն և 'ի բանական։

(Կէչ՝ մարդկայնէ։ էր։ 135)

Կ. – ՊՕԼԻՍ
Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ԶԱՐԴԱՐԵԱՆ
)(1870)(

Ա. Զ Դ

Ես վանայ Թոնիր-Շինողենց գերդաստանէն, Կ. Պոլիս ամուսնացեալ, Մահտեսի Յովհաննէսի անդրանիկ որդի Յակոբս, ազգ կ'առնեմ ներկայիս, որ բնիկ Ակնեցի Այթունեան կարապետ էֆէնտին հաւատարիմ ըլլալով, զանազան խմաստուն խորհուրդներ նկատած էի անոր վրայ. բայց նա իւր առժամանակեայ կեանքէն հրաժարած ու յաւիտենականութեան ձեռք տուած ժամանակը իրարմէ շատ հեռու ըլլալովնիս, միմեանց վերջին տեսակցութեան չկարացինք արժանանալ։

Սոյն հանճարեղ խմաստունը մարդկային սեռին օգտակար ծառայութիւններ ընելու նուիրեալ խմաստնոց կարգին մէջ ամենէն գերազանցը դանուելու նկատմամբ շատ կը տքնէր, և գերազանցելու ալ բաւական արդիւնքներ յառաջ բերած էր. որոց մին էր սոյն «Հետազօտութիւն Գօլերայ Ախտի» ըսուած հեղինակութիւնը, որ իւր ձեռագրէն օրինակելով, իւր փափաքին համեմատ, այս անգամ հրատարակմամբ մարդկային սեռին օգտին կը մատուցանեմ

Ներկայ տետրակով։

ՀԱՄԱՌՕՏ
ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ
ԳՕԼԵՐԱՑ ԱԽՏԻ

Հեղինակեալ և յօրինեալ Յայթունեան Կարապետէս 'ի Լուսաւորչական Հայոց Ակնեցի։

Յամի Տեառն 1866 'ի Յունվարի 5, 'ի Կ. Պոլիս, 'ի Մէրճան, Յայի փաշա խան։

Ի պատիւ բանականութեան և 'ի ծառայութիւն ամենայն մարդոյ։

ՍԱՀՄԱՆ ԳՕԼԵՐԱՑ ԱԽՏԻ

Թէ ինչ է Գօլերայ ախտն։

Գօլերան է յուղումն շեկամաղձի զանազան տեսակ. և 'ի յուղմանէ անտի անկանի յիւր առաջին սեփհական յորակութենէ։ Շեկամաղձի իսկական պաշտօնն 'ի կենդանիս՝ յայտ է քաջ բնագէտ և խոհական բժշկաց. մեզ չէ փոյթ աստ յիշել։

ՅԱՂԱԳՍ ՊԱՏՃԱՌԱՑ

Պատճառ տեսակին։

Ի տիեզերական բնական նախասահմանեալ կարգն հայելով, սոյն յիշեալ ախտի և այլ զանազան բնականապէս բանից եղելութիւնքն ընելով, ճշմարտապէս արժան է մեզ ասել 'ի բաղում անգամ

փորձոյ մերոյ՝ թէ են երկնային մարմնոց, ըստ նախասահմանեալ պայմանի իւրեանց, զանազան տեսակաւ և եղանակաւ շարժումն և հոլովումն և հայեցողութիւն ընդ իրեարս, և 'ի նոցունց պատճառեցեալ ազդեցութիւնք, զորս իւրեանց սեփհական եղեալ բնական որակութեամբքն ազդեն 'ի մէն մի տարւոջ և կամ յայլ աւելի ժամանակս, յայսմ երկրի։

Պատճառ Երրորդ

Յառաջին պատճառէ ներփակաբար առեալ 'ի նոցին վերին մարմնոցն շարժմանց՝ և 'ի հոլովմանց լինին յայսմ երկրի ըստ կլիմայից և ըստ դրութեանց և ըստ հայեցողութեանցն իւրեանց՝ զանազան տեսակ ներգործութիւնք 'ի բնութենէ. այսինքն մէտորէից, բուսականաց, տնկականաց, և կենդանեաց՝ առատութիւն և նուազութիւն և այլն։ Եւ 'ի նոյն արտադրեալ իրաց առատութենէ, բազում տեսակ և ազգի ազգի դժուարաբոյս և անբեր վնասակար բուսականք, տնկականք, կամ կենդանիք և կամ մետորայք զօրանան, առաւելուն, ուռճանան, ընդարձակելով տարածին 'ի վերայ երեսաց երկրի, որ յայլում տարւոջ հազիւ թէ սակաւ ինչ երեւին իբրեւ չեղեալ. թէպէտ յամենայն ժամանակի ելանէ յամենայն արտադրեալ մարմնոց, 'ի քարշմանէ արեգական կամ յայլ ջերմ և չոր աստեղաց դոլորշի և վերանայ ընդ օդս, ըստ իւրեանց յատուկ եղեալ ծանրութեան չափոյ, 'ի միմեանց բարձր կամ ցած։ Ուստի՝ նաեւ դոլոր-

շիք վնասակար արտադրելոցն՝ հարկաւ ընդ նոցա ելանեն յօդս և խառնին ընդ նոցա և մնան անդ։ Եւ հետեւաբար 'ի շարժմանէ իւիք պատճառաւ հողմոց աստ և անդ, ուր երթայ հողմն և տանի ընդ իւր զօդ, և երթայ նոյն վնասակար դոլորշի. և յորում տեղւոջ դոտանի և դոտանէ իւրեան վնասելոյ ենթակայ եղեալ իրն, կամ մարդն և կամ այլ կենդանի, ըստ սեռի և ըստ տեսակի իւրեանց, սկսանի հետզհետէ 'ի ձեռն շնչառութեանցն իւրեանց 'ի ներքս մտանել նոցին և տարածելով ընդ ամենայն երակս և ջիղս, յուզել զնոցունց շեկամաղձն, որպէս լեմոնն 'ի կաթի և կամ 'ի գինւոջ. նման նոցա ապականէ զնոցին շեկամաղձն, և ձգէ յիւր իսկ բնական որակութենէ։ Եւ 'ի սոյնպիսի ներգործութենէ պատճառի հիւանդութիւն, կամ մահ մարդոց և կամ այլ կենդանեաց, ըստ սեռի և ըստ տեսակի և ըստ ներքին խառնուածոց ենթակայութեանն իւրեանց և այլն։

Պատճառ Երրորդ.

Երրորդական պատճառն է 'ի ներքս ամենայն կենդանեաց և մանաւանդ մարդոցն։ Նախ իւրեանց մարմնոց կազմուածոց տեսակքն. երկրորդ՝ տրամադրութիւնքն. երրորդ՝ ներքին գլխաւոր եօթն գործարանաց և երկուց արբանեկաց վեց տեսակ որպիսութիւնքն. չորրորդ՝ 'ի նոյն գլխաւոր գործարանաց հեղեալ գլխաւոր չորեքկին խառնուածոց քանակութիւնն և որակութիւնն. որպէս ստորեւ ունիմք տեսանել թէ զի՞նչ են յատկապէս ներքին գլխաւոր պատճառքն։

ՊԱՏԿԵՐԱՒ ԻՄՆ ՑՈՒՑՈՒՄՆ ՆԵՐՔԻՆ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՏՃԱՌԱՑ

Պարէտ և որդեսորդեաց շնչառաղէն .

21 Քանակութիւն :
42 Որակութիւն :

Այս տեսակք երբէք ոչ են ենթակայ Գօլերայ ախտի . ոչ օդն և ոչ երկիւղն , ոչ ուտելիքն և ոչ ըմպելիքն ՁՆասեն :

21 Քանակութիւն :
21 Որակութիւն :

Այս տեսակք ուտելեաց և ըմպելեաց և այլ ՁՆասակար իրաց լինին ենթակայ :

42 Քանակութիւն :
42 Որակութիւն :

Այս տեսակք ուտելեաց և ըմպելեաց և երբեմն երկիւղի և այլ տեսակ ՁՆասաւոր արարողութեանց և իրաց լինին ենթակայ :

42 Քանակութիւն :
21 Որակութիւն :

Այս տեսակք 'ի բնութենէ նախապէս են ենթակայ , և սկիզբն սոյն ախտի յայնպիսեաց սկսանի . որպէս զայս բան խոհական բժիշկք 'ի փորձոյ իւրեանց քաջապէս կարող են հաստատել :

Որպէս տեսանեմք յայսմ գրութեան 'ի վեր անդր գծագրեալ պատկերացն ապացուցութենէ և 'ի նոցունց առաջի գրեալ յայտարարութեանցն , որք գրեալ կան առաջի ապացուցութեան պատկերացն , ներքին պատճառքն՝ և 'ի նոցունց պատճառաց իւրաքանչիւր անհատից պատճառեալ հիւանդութիւնքն՝ տարբեր եղանակաւ 'ի միմեանց լինին, ոմանցն սաստիկ, ոմանցն թոյլ, ոմանցն յառաջ , և ոմանցն յետոյ ժամանակաւ և կամ երկարատեւողութեամբ , և ոմանցն ուշ ժամանակ . և ոմանցն երբեմն դեղով և կամ այլ ինչ ծանուցեալ կամ անծանօթ իրաւ և պատճառաւ իւիք բժշկեալ լինի : Ուստի 'ի վեր անդր գծագրեալ պատկերաց տեսակքն՝ յոյժ բաղում են, բայց մեք իբրեւ ապացոյց սակաւ գրեցաք 'ի ծանօթութիւն ընթերցողաց և դիտողաց. եթէ 'ի կաղմուածոց, եթէ 'ի խառնուածոց և յայլ որպիսութեանց կողմանէ յոյժ քաջածանօթ են բնագէտ և խոհական բժիշքն:

ԱՊԱՑՈՒՑՈՒԹԻՒՆ ՀԱՆԴԵՐՁ ՑԱՐԱՑՈՒՑԻՒ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏՃԱՌԱՑ

Որպէս յայտ է ամենայն մտաւոր և հանճարեղ մարդոց , զի տղայոց վարդախտն և հարսանիքն 'ի բաղում տեղւոջ վասն ամենայն երախայից իբրեւ զպարտս իմն բնութեան են , և ամենայն երախայք մի անգամ կրեն զնոյն ցաւ և զվէրս . սակայն ոմանք սաստիկ և ոմանք թոյլ եղանակաւ , ըստ բնական ենթակայութեանն իւրեանց : Այս եւս յայտ է , զի սոյն յիշեալ վարդախտն և

հարատևիթն ոչ յամենայն տարւոջ 'ի բնութենէ գայ, և ոչ կրեն առ հասարակ այնք ամենեքին որք ոչն են կրեալք։ Այլ 'ի քանի տարիս մի անգամ գայ 'ի բնութենէ, և կրեն այն երախայք՝ որ դեռ եւս ոչ են կրեալք, ոմանք կանուխ և ոմանք ուշ ժամանակաւ 'ի նմին տարւոջ։ Թէպէտ այս յիշեալ երկու տեսակ ախտք՝ երբեմն երկու տարի տեւէ 'ի միւսմ կլիմայի և երբեմն մի, բայց նա եւս ունի պատճառ բնականապէս 'ի դասակարգութենէ աստեղացն հոլովման. բայց թէ զսորին պատճառն և եթէ երախայիցն կրելութեան զսկզբնական զներքին պատճառն յայտմ գրութեան մերում լռեմք. իսկ եթէ յայլում նուագի պատիւ ունիցեմք խօսելոյ, 'ի նմին ժամանակի չիցէ մեզ անորոշ և անծանօթ զոր խօսիցիմքն։ Ուստի յայսոցիկ յիշելոց ախտից մին՝ որ վարդախտ ասի, 'ի բաղում երկրի բաղումն ՁՆասէ երախայից և յոյժ բաղումք կոտորին, զնախապատրաստական դեղ և զդարման զսորին ախտի այն է Զ՞ԷՆ չգիտելոյ և կամ չգտանելոյն աղագաւ. ո՛հ, ո՞րքան սրտի ցաւոյ պատճառ լինի այս տգիտութիւնն հասարակաց՝ փափուկ զգացման տէր և մարդասէր մարդոց, որ հասարակութիւնն տգիտութեամբ իւրեանց զրկին յիւրեանց նորածին զաւակացն 'ի ծաղիկ հասակի։ Յայլում նուագի եւս եթէ պատիւ ունիցիմ առաջի ձերում մեծապատուութեան, ցաւով սրտի և դթութեամբ կամիմ զնոյն յիշեալ ախտի զժամանակն և զտեղին եւս յայտնել ըստ իմում փորձառութեան։

Եւ դարձեալ յայտ է մեզ ամենեցունց, զի գոն մասնաւոր տեղիք, յորս երբէք սոյն յիշեալ ախտքն ոչ գան 'ի բնութենէ, և ոչ կրեն երախայք. և չգալոյն պատճառն է նոյն երկրի նախ՝ կլիմայն, երկրորդ՝ դրութիւն, երրորդ՝ հայեցողութիւնն, չորրորդ՝ ամէն տեսակ հողմոց չտիրելն, հինգերրորդ 'ի նոյն տեղիս եղեալ հողոց և ջուրց որակութիւնքն և կամ անծանօթ այլ և այլ պատճառք, որ դեռ եւս ոչ են յայտնեալք։ Եւ այս ախտք յամէն տարւոջ չլինելոյն և երբեմն 'ի քանի տարւոջ մի անգամ լինելոյն պատճառն է, եւս և 'ի վերին մարմնոց շարժմանէ, որպէս զԳօլերայ ախտէ 'ի վեր անդր դրեցաք. այս եւս 'ի նոյն և 'ի նման պատճառաց զարթնու 'ի տղայոց 'ի ներքս եղեալ 'ի բնական պատճառացն և յապականութեանցն. և նոյն ապականութեանց նախապատճառն և երկրորդական պատճառն չեն անորոշ և անծանօթ՝ գիտողն պատուողաց։ Ուստի յայսմ յիշեալ վարդախտէն՝ 'ի բաղում երկրի երախայք 'ի ձեռն հնարեալ կանոնաւոր պատուաստութեան թեթեւութեամբ և դիւրութեամբ աղատին, եթէ նշմարելով զժամանակն, քան զնոյն ամն գոնէ վեց ամսօք չափ յառաջ առնեն զպատուաստն։ Իսկ եթէ նոյն ախտի շարժառիթ՝ օդն տիրեալ տարւոջ իցէ, ոչ ինչ օգնէ և վերստին կրեն զնոյն ցաւ. վասնզի նոյն ախտի շարժառիթ օդն՝ յերախայս մնեալ է. վասն այնորիկ վերստին տիրէ նոյն ախտ 'ի վերայ երախային։ Սոյն գունակ է նաեւ Գօլերայի և ժանտախտի հիւանդութեամբ հիւանդացեալ մարդոց դարման

առնելն։ Եւ սորին նման գոն այլ բաղում ապա-
ցոյցք, որ աժմ աւելորդ համարիմ յառաջ բերել՝
առաջի ձերդ հմտութեան։

ՑԱՂԱԴՍ ԵՂԱՆԱԿԻ ԱԶԱՏ ՊԱՀԵԼՈՑ Ի ԳՕԼԵՐԱՑ ԱԽՏԷ ԶՄԱՐԴԿԱՅԻՆ ՍԵՌՆ

Ի բնութենէ ընկալեալ բնականապէս պաշտօնն է
ամենայն մարդասէր կատարեալ քաջ փիլիսոփայից
և ներհուն խոհական բժշկաց՝ բաղում ամօք յա-
ռաջագոյն զմարդկային սեռի ամենայն տաժանելի
իրաց պատճառն և ժամանակն, մանաւանդ Գօլե-
րայ ախտի, որոշել 'ի ձեռն աստեղագիտութեան և
բնական կանոնի, և ծանուցանել յընդհանուր երկրի
բնակեալ մարդոց, որպէս խաւարումն արեգական
և լուսնի և այլ մոլորական աստեղաց 'ի ձեռն կա-
նոնաւոր հաշուոյ, հանդերձ քանիցս անգամ ստու-
գեալ փորձառութեամբք։ Նոցունց նման այս տե-
սակ իրաց այսինքն Գօլերայ ախտի և կամ այլ ինչ
իրաց, որք 'ի բնութենէ յառաջ ածին և ոչ 'ի խորհրդ-
դոց, 'ի ձեռն աստեղաբաշխական կանոնական հաշ-
ուոց, հանդերձ բաղում անգամ փորձառութեամբք,
խոհական և հանճարեղ մարդիկ կարեն որոշել՝
զպատճառն՝ և զժամանակն։ Եւ յետ դուշակելոյ
ամենայն տաժանելի իրաց մանաւանդ Գօլերայ
ախտի զպատճառն և զժամանակն, նախ պարտ է
'ի նոյն տարւոյ մի տարի յառաջ, 'ի վեր անդր
պատկերաւն ցուցանել ենթակայ եղեալ մարդոց՝
ըստ բժշկական կանոնի։ և զշեկամաղձի զառաւե-
լութիւնն նուազեցուցանել։ Երկրորդ զթուլու-

թիւնն շեկամաղձի, այսինքն թոյլ որակութիւնն
սաստկացուցանել։ Երրորդ զուտելեաց և զըմ-
պելեաց զվնասակար տեսակն արգելուլ, և այլոցն
որոց անկարելի է արգելուլ՝ նոցունց զորպիսու-
թիւնն և զքանակութիւնն սահմանաւորել։ Չոր-
րորդ զբնակարանաց տեղիսն, զդրութիւնն,
զհայեցողութիւնն և զայլ հանգամանսն, հայելով
վնասակար տեղեացն՝ յայլ տեղի փոխադրել, և
զվնասակար հողմոց հնչումն արգելուլ, և զայլ այս-
պիսի պատճառսն արմատախիլ առնել։ և յայլ
հարկաւոր եղեալ միջոցսն, ըստ բժշկական կանոնի
ամենայն զգուշութեամբ, ժրութեամբ և խոհե-
մութեամբ ձեռնարկելով, պատրաստ գտանիլ՝ վա-
սն ազատ և առողջ պահելոյ զամենայն ժողովուր-
դըս ընդ ամենայն երկիր։

Վասն զի նման տղայոց վարդախտի, և կամ նման
ժանտախտի, յետ ախտն տիրելոյն զոր ինչ դեղ
և դարման առնեմք, երբեմն է ներընդունական,
և երբեմն է իբրեւ մխիթարութիւն։

Դարձեալ սոյն յիշեալ ախտի պատահումն յապագայ
ժամանակի, որք 'ի բնութենէ յառաջ ածին և լինե-
լոց են, 'ի ձեռն տիեզերական բնութեան կարգի,
և աստեղագիտական կանոնաւոր հաշուոյ, և բա-
ղում անգամ ճիշդ փորձելով, ստոյգ յարացուցիւ-
քըն կարէ ապացուցանել։ և ամենայն խոհական
մարդ իսկ եւս քաջածանօթ է սոյնպիսի իրի, որ
միշտ կանոնաւոր յարացուցիւ ապացուցանի և տը-
բամաբանական մակաբերութեամբ։

Վ. ԵՐՋ

ՀՍՍՀ-ԿԿԳ

2844

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0073827